



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Զ. — ՇՐՉԱՆ ԺԵ.

1882

ՏԱՐԻ ԺԵ. ՅՈՒՆԻՍ 30.

ԻՆՔՆ ԻՒՐ ՎԵՐԱՅ ԻՇԽԵԼԸ, ԿԱՄ ԻՆՔՆ ԻՒՐ ԳԼԽԻ ՏԵՐԸ ԼԻՆԵԼԸ.

Պարտականութիւնը շատ անգամ կանչումէ քեզ պատերազմի դաշար բաշումիւններ անելու. արիացիր, մա սաղաւարտդ ու նիզակդ շողշողացող վահանիդ հետ մէկտեղ: Եւ եթէ հարցանել ես ուզում թէ ո՞ր է՝ քեզ մեծ մեծ վնասներ հասցնելու համար՝ միշտ ուրախ սրտով պատրաստ թշնամիդ, հնուու տեղ մի վնասուեր, քո սրբտիդ մէջն է թագ կացած, քեզ սպասում. այդ՝ քո վտանգաւոր թշնամիդ մեղքի հրապոյրն է, որ մկորը բաղցրացնումէ քո աչքիդ, որ ցանկանաս ու անես.

Քեզ լաւ պահպանող սաղաւարտդ քո արձունն եւ զգոյշ մնալը լինի ու աղօթք անելը՝ քո նիզակը՝ փորձութեան, նեղութեանց մէջ ցոյց տուած քաջասրտութիւնդ: Քո վահանը՝ Աստուծոյդ ապաւինելը հաստատուն հաւատով ու աներկբայ յուսով: Միայն անարատ սիրտ ունեցողներն Աստուած կտեսնեն:

Հին ժամանակի կռապաշտ փիլիսոփաներն անգամ զարմանում էին միտք անելով ու սարսափում էին, որովհետեւ խելք հասցնել չէին կարողանում թէ՛ ինչպէս բան է, որ մարդիս մէջը չարն ու բարին միշտ միմեանց հակառակ են: Նոքա զարմանումէին թէ՛ ինչպէս մի եւ նոյն հողեղէն մարդոց մէջ կան այնպիսիները, որ իրանց ցանկութիւններին, կիրքերին սանձ չգնելով, իրանց ճանապարհից բոլորովին դուրս են գալիս, իրանք իրանց կորցնում, իրանք իրանց տակը քանդում եւ իրանք իրանց սպանում են, եւ իբրեւ մարդկային անուանն անարժան օւ անարգ մարդիկ գերեզման մանում: Նոյնպէս խելքները չէր

Հասնում թէ՛ ինչպէս նոյն մահկանացու մարդոց մէջ կան եւ այնպիսիները, որ կարողանում են իւրեանց կիրքերը զսպել իրանց վատ ցանկութիւնները չկատարել, մոլութիւններից զգոյշ մնալ, երբ որ մոլութիւնը միշտ հրապուրումէր նորանց եւ ամեն անգամ այնտեղ էր հասցնում, որ պիտի յաղթէր. ուրեմն յայտնի երեւումէ, որ այդ մարդիկը միշտ պիտի պատերազմէին, որ չըյաղթուին եւ իւրեանց քաջութիւնն էր ամեն անգամ որ կարողանում էին ընդդիմանալ մոլութեան հրապոյրներին, եւ կարող էին որովհետեւ իւրեանց արթուն ու զգոյշ մնալն էր, որ պատերազմելը չէր գժուարացնում եւ անօրինակ քաջութիւն անելու էր հասցնում նորանց: Մարդիս մէջ չարն ու բարին միմեանց հակառակ լինելը իրանք իրանց բացատրելու համար, որ մի կերպ հասկանան թէ՛ ինչպէս բան է այս հակառակութիւնը մարդիս մէջն, մի ժամանակ շատերը կարծում էին թէ՛ մարդս ունի երկու տեսակ հոգի, լուսի հոգի ու խաւարի հոգի: Կային եւ այնպիսի մարդիկ, որ կարծում էին թէ՛ մարդս ունի իւր մօտն թէ՛ բարի եւ թէ՛ չար հրեշտակ, որ իրան բարի կամ չար բանի են տանում, լաւ՝ կամ վատ բան նորա մօքի մէջ դնելով: Այսօր եւս շատերն տուում են թէ՛ սատանան է, որ Աստուծոյ թոյլ տալովն, մարդիս գէպ ի չարն է տանում: Հրապուրելով խաբելով, Բայց սուրբ գիրքը ոչնչացնում է այդ մեր բոլորովին ծուռ ու սխալ կարծիքը: Այ թէ Աստուծ է, ասում են, որ մեզ թոյլ է տալի չարից փորձուելու, այլ մարդս է, ինչ էնի ցանկութիւններն զրդւում, գութում, ճշմանում ու արարում:

Մեր գոյապահանքն ընդթիւնիցն են աղբիւրի պէս բղխում ու դուրս գալի ամենայն այն սաստիկ ցանկութիւններն, հակումներն ու զգացմունքներն, որ դնալով, գնալով կիրք են դառնում, վատ ուղղութիւն եւ ընթացք ստանալով, եւ մեր բանական հոգու ձեռքից իջում միապիտութեան գաւազանն: Մեր զգայական ընդթիւնիցն են յառաջ գալի այն անսանձ ու կատաղի հակումներն, որ շատ անգամ մեր խելքի ամենազնիւ կանոններն, մեր հատուտ ու պատուական գիտաւորութիւններն կատարելու խափանում են ու ոչնչացնում:

Չարը մարդիցս է. Ամենակապարեալ մեր Սպեղծօղն ու Աստուծը՝ միայն բարին է ստեղծել, Նա՛ Ամենասուրբն՝ մեզ խելքի, բանականութեան օրէնք է տուել եւ դրել է մեզ այնպիսի մի աշ-

խարհքի մէջ, որ ամեն տեսակ մեզ գրաւող եւ մեր վայելչութեանը համար ստեղծուած անթիւ, անհամար բարիքներ ունի իւր մէջն: Մեզ գրաւող ու մեր վայելելու համար իւր ստեղծած բաների մէջն առաջնորդ ու իշխան տուել է մեզ ու դրել մեր խելքի ու կամքի ոյժը, որ մեք ամենայն պարագաների մէջ այն կարողանանք ընտրել, ինչ որ ամենազնիւն է: Նա մեզ տուել է հոգի, որ անմահանալու պիտի ջանայ ու ճգնի. տուել է մեզ նոյնպէս եւ մարմին, որ հողիցն է առնուած ու հող պիտի դառնայ եւ որ ուրիշ ցանկութիւն չունի բացի այն բանից, ինչ որ երկրաւոր է, հող դառնալու բան է. Աստուած տուել է մեզ մեր մարմինն, որ մեր հոգին նորա վերայ իշխելով, իր ուժը բանացնի ու զօրանայ: Եթէ որ մեր մարմնական զգացումներն զօրեղ ու սաստիկ չլինէին մեր մէջը, մարդս երբէք կատարելութեան չէր ձգտի, այլ մի յոյլ հանգստութեան մէջ իւր կեանքը կանց կացնէր միշտ խմբած, քնած դրութեան մէջ: Անզգայ է քարն, բայց որ մեղանջել չէ կարող, սորա համար մի՞թէ՛ առաքինի է՝ պիտի ասէինք: Անբան է կենդանին. մի՞թէ նորա արած յափշտակութիւնն ու պատճառած մահն, ուղղմամբ ասել, ուրիշ կենդանիներ խեղդել, սպանել, ուտելն Աստուծոյ առաջին հաշուի դնելու չարագործութիւնն պիտի համարէինք:

Առանց մեր զգացումների խթանին, մեզ գրգռելուն, զայրանալուն, կատաղելուն, որ խիստ շատ անգամ մեր հոգու շատ ու շատ լաւ համոզմունքների դէմն են դուրս գալի ու վրդովմունք հանում, մեր՝ յաւիտենական անմահութեան կոչուած հոգին՝ իւր ոյժը, զօրութիւնը աւելացնելու համար՝ միջոց, հրնարք չէր ունենար. անկարելի կլինէր մեր հոգուն ներքին կատարելութեան այն աստիճանին բարձրանալ, հասնել, որ մեզ Աստուածութեան է տանում, մօտեցնում: Պատճառ որ մեր ոյժն աւելանում է ոչ թէ մեր անշարժ, հանգարտ մնալովն, այլ աշխատութիւնների, նեղութիւնների, դժուարութիւնների, արգելքների յաղթելով. միայն պարապ չնստելն ու միշտ գործ կատարելն է, որ մեր ոյժն աւելացնում է: Ուր որ կուշտի կալել (կոխ պրծնել) չկայ, այնտեղ յաղթել եւս չկայ:

Անուանի մարդիկն միշտ նոքա են եղել, որոց մտքիցն ինչեր է անց կացել ու սրտներումն ինչեր է եղել, բայց կարողացել են, իմացել են իրանց կառավարելն, որ չյաղթուին իրանց մըտ-

քից ու սրտից, թէեւ շատ դժուար է եղել ամեն անգամ զգուշանալն, դիմանալն ու նոցա ուզածը չանել, որչափ եւս անհանգիստ են արել իրանց մտքերն ու զգացումներն: Ասածիս հակառակն ամենալատ չարագործներն այն մարդիկն են եղել, որ իւրեանց կատարած զգացումներն ու յատկութիւնները զսպել, բռնել, իրանց լու պահել չեն կարողացել, իրանց սանձը, կապը տուել են բոլորովին նոցա ձեռքն ու տարուել են: Մի մարդ կը գտնուի՞ արդեօք, որ խելքը գլուխը լինի ու այդ ոգորմելի մարդոց վրայ սաստիկ չցաւի, որ իրանք իրանց կորցրել են, բանական մարդոյ կարգից դուրս են եկել բոլորովին: Նոքա եւս այնպիսի ձիրք ու շնորհք ունէին, որ կարող էին իւրեանց նման մարդոց բարերարներն լինիլ, բայց իրանք էին մեղաւոր, որ իրանց նման մարդոց մէջն ու հետն ապրելու անարժան, բոլորովին անպիտան համարուեցան ու երեսները տեսնել ոչ ոք չէ ուզում:

Մի մեծ բան չէ, իշխանութիւն ձեռքն ունենալով եւ բռնութիւն, խարդախութիւն, խորամանկութիւն բանեցնելով, որ իշխաներին իւր ձեռքի տակը պահելը, առանց շղթայի կապած, որ շարժ գալ չկարողանան ու միայն իւր կամքին հնազանդեն, մարդիս՝ ինքն իրան վրայ իշխանութիւն բանեցնել կարողանալն, ինքն իրան գլխին տէր լինելն է ամենագոյն արժանն եւ այստեղ է յայտնի իմացվում, որ մարդիս, ազատութեան կոչուած, հոգին ամենամեծ յաղթութիւնն է անում ու յաղթանակ կանգնում: Քանի քանի մարդիկ են եղել, որ իւրեանց զօրքերի ուժովն թշնամիներին յաղթել են, բայց իւրեանց խկ կիրքերին յաղթել չեն կարողացել. իւրեանց ցած պատուասիրութեանըն ծառայ են եղել եւ իւրեանց հպարտութեանը՝ գերին: Եղել է մարդ, որ իւր շնչովն, իւր բերանից դուրս եկած խօսքովը միլիօնաւոր մարդիկ է կառավարել, բայց իւր անասնական ցանկութիւններն, ոգորմելին, չէ կարողացել սանձել, զսպել, իւր անառակ ցանկութիւններին, իւր բարկութեան, սխալալ քինախնդրութեան, սնապարծութեան գերին է եղել:

«Ոստի մի՛ լուսոս, որ մեզք լուսոսորի յեր մահլանացոս մարմնի վերայ, ոս հնազանդէք նորա ցանկութիւններին», ասում է մեզ Աստուծոյ խօսքի ձայնը:

Եւ մի՞թէ կայ աշխարհիս վերայ այն քաջասրտութիւնիցն եւս աւելի բարձր բան, որ մարդս ինքն իրան միշտ իւր իշխանութեան

տակն է պահում եւ որ մտքուր խղճմտանքով մահուան առաջն
անգամ դուքս է գայիս առանց փոխհնայու: Նա իրան անպատ-
ւութիւն բերող շղթաններով չէ կապկապում: Նորան անա-
ռակութեան հրապոյրներով, կամ թէ պատուանուններ ու
բարձր աստիճաններ նորա առաջը դնելով, կամ թէ այքը վա-
խեցնելով, զոր էք աշխատում այնպէս անել, որ ինքն իրան
անհաւատարիմ գանուի: Երբէք չմտանալով իւր մարդկային
արժանաւորութիւնն, Քրիստոսի հաւատարիմ ու ճշմարիտ աշա-
կերտն երբ որ իմանումէ, որ իւր սրտից մի վատ ցանկութիւն է
ուզում անց կենալ, խսկոյն իւր մէջը խեղդումէ ու մեռցնում,
եւ ամենեւին չթողնելով, որ իրան մտեհնայ գնումէ: Իւր կեանքի
ճանապարհն չփոխելով, անվնաս ու ազատ մի Աստուծոյ նման,
եւ միշտ նոյն մարդն մնալով ու միշտ ինքն իրանից գոհ ու հան-
գիստ սրտով:

Ով որ ինքն իրան վերայ իշխելն իմանումէ, ով որ ինքն իւր
գլխի տէրն է, ոչ ոք չէ կարող նորա գլխին տէր դառնալ ու նո-
րա վրայ իշխել, Նորա անվրդով բնութիւնն բարկացած մար-
դին կհանդարտեցնի կամայ ահամայ. նորա անվախութիւնը
բռնակալին անգօր կանի, շուարացնելով. նորա համեստութեան
առաջին՝ փառասիրութիւնն իւր նշանակութիւնը կկորցնի. նո-
րա բարոյական, մաքուր կեանքի առաջն անառակութիւնն ոյժ
չունենալ. նորա ազնիւ հպարտութիւնն խորամանգ կեղծաւոր-
ների այքը կվախեցնի. նորա անփոխ ճշմարիտ զգացմունքը այն
ամենայն մարդոց իրանից հեռու կփախցնի, որ ուզում են փոր-
ձել նորան ուղիղ ճանապարհից հանելու: Ով որ սիրում է եւ
բնորոնում ամենի համար դրած Աստուծոյ օրէնքն, նա Քրիս-
տոսի եղբայրն է եւ Աստուծոյ արքայութեանն ժառանգակիցը:
Իսկ ով որ օրէնքի մեծ նշանակութիւնը չէ ճանաչում եւ ըն-
դունում, նա օրէնքի համար մի օտարական մարդ է եւ օրէն-
քով գնալու ոչ հասկացողութիւնը եւ ոչ կարողութիւնն ունի,
որովհետեւ չգիտէ թէ, օրէնքն ինչ է եւ ինքն ինչ պիտի անի,
կամ չանի:

Ով որ իւր գլխի տէրն է, ուրիշների վրայ եւս տէր է դառ-
նում: Մշտական, միակերպ, ու անփոփոխ իւր խոհականու-
թիւնովը նա ճանաչում է հողեղէն մարդոց արած անխելքու-
թիւններն ու սխալանքներն. նա պարզ է տեսնում ու հասկա-

նու՛մ մարդոց տեսակ տեսակ խառնաշփոթ ու անկարգ կեանքն ու կրքերն: Սորա համար այդպիսի մարդի բերանիցը հանած խօսքն, նորա տուած խորհուրդը այնպէս լաւ է, որ նորանից աւելին պէտք չէ, ինչու որ նա առանց նախապաշարման, առանց աստիութեան, առանց ուրիշ նպատակներ ունենալու մտածումէ ինչպէս իւր, այնպէս եւս ուրիշների համար, եւ ընտրում ու ասում՝ այն, ինչ որ բարին է, ուղիղն ու ճշմարիտը: Այսպիսի մտածմունք ունեցողիցն է գոյանում մեր սրտի մէջն այն զգացմունքն, որով մեք շատ պատվում ենք ազնիւ մարդին, որ շահասիրութիւնից զրգուած, գործ չէ տեսնում, այլ բարի ազնիւ եւ ուղիղ բանն սիրելուցն: Մարդ հասկանումէ նորա խելօք ինեղը, եւ իրան ընդդէմ եկած խօսքին, կամ գործին համար չէ ատում նորան, որովհետեւ տեսնումէ, որ առաքլինութեան ճանապարհովն է մտածում, խօսում ու գործում. եւ նորա՛ մարդիս սրտին շատ գիւր գալու մի սիրելի բանն եւս այն է, որ ամենեւին չէ ցոյց տալի ու չէ հասկացնում մեզ մի կերպ, թէ տեսա՞ք ինչե՛ր կարող եմ անել, ինչե՛ր է գալիս ձեռքիցս, այլ համեստ է եւ ամենեւին չէ ուզում, որ մարդ իմանայ իւր արած լաւ գործն:

Ճշմարիտ, իսկական քրիստոնէի պատկերն այս է. պատճառ որ այդպիսի մարդն է միայն Քրիստոսի հաւատարիմ հետեւողն, իսկ իմաստունն եւ իւր ներքին աշխարհի, ուզումեմ ասել, իւր խելքին ու սրտին տէրութիւն անողն:

« Բայց կարելի՞ բան է, ասումէ մի մարդ, խելքը բան չըկորելով, ւժիթէ կարելի է, որ մարդս ինքն իրան յաղթելու այդ բարձր աստիճանին հասնի: Այդ կատարելութեանը հասնելու համար՝ մարդս ոչ թէ հողեղէն մարդ պիտի լինէր, այլ ուրիշ մի լաւ տեսակի արարած եւ ստեղծուած կարգից գուրս ու գերբնական ուժերով: Ով որ այսպիսի անդիմադրելի դոժ-լարութիւններ ցոյց տալու խօսքեր է բերանիցը հանում՝ բոլորովին թուլացած սրտով, նա իբրեւ ալապ հոգի ունեցող արարած չէ խօսում, այլ իբրեւ մի գերի, որ զգայական զուարճութեանց շղթաներով կապուած է արդէն: Դու ամենեւին չես կարում մտքիցդ անգամ անց կացնել, ոչ թէ հասկանալ, որ այդ բանը անկարելի չէ, որովհետեւ այդպէս են ուզում ցոյց տալ, ինչ է որ՝ ինքդ քեզ գետնով խփելդ ու կորցնելդ, բարո-

յական, առաքինի մարդոց հաշուից դուրս գալիս ես ուզում արդարացնել. բայց կարո՞ղ ես արդեօք դու քո խայտառակ մարդ լինելիդ այդպիսի հեշտ կերպով ծածկել ու քեզ արդար ցոյց տալ հոգիների յաւխտենական Գառաւորի առաջին եւ ունա եւս կների՞ քո յոյլ թուլութիւնդ, քո կեանքումդ այն միայն սիրելիք ու անելիք ինչ սրտիդ դիւր է գալիս ինչ որ քեզ լաւ է թվում, ուզում եմ ասել, այն քո փափկասիրութիւնդ ու հեշտասիրութիւնդ որ թողնել չես ուզում, քեզ համար մի անտանհիլի գրկանք համարելով այդ անելը. բայց լաւ իմացիր, որ իսկ դժբա են քեզ խեղճացնում ու չեն թողնում քո կրքերիդ դէմ պատերազմելու եւ յաղթելու. Իրաւ է, դու հոգեղէն մարդ ես, բայց միանգամայն եւ մի բարձր էակ ես. հասարակ արարած չես, ինչի՞ համար ես թողնում, որ այս զգայական մտքերն քեզ դրդեն, վրդովեն, շարժեն վատ բանը անելու՝ ընդդէմ քո ունեցած համոզմունքիդ, որ լաւն անելն է ցանկանում. — Ի վերուստէ՞ն զօրութիւն ես ուզում ստանալ լաւն անելու համար. բայց փորձել ես արդեօք քո հոգուդ զօրութիւնը, որով աշխարհք ես ծնել: Այլ որ ասու՞մէ պնդելով թէ, անկարելի բան է, որ մարդս ամեն ժամանակ իւր անձն իւր ձեռքն ունենայ, միշտ իւր գլխի տէրը լինի, այնպիսի մարդը կիսով չափ (կէս) կորած է: Մարդո՞ր ինչ որ կա՞մս-մէ կայ, միշտ կարո՞ղ է անել, երբ որ նա այն է միայն ցանկանում լինել, ինչ որ մի բանական, Աստուածանից յառաջ եկած արարած պիտի լինի:

Առաջին քայլը, կամ գլխաւոր բանը, որ պէտք է անենք մեր գլխի տէրը լինելու միջոցը ձեռքը բերելու համար, մեր Բն-Նեան-անկո-նի-ննելն միշտ կերպով քննելն է, որ ինքներս մեզ ճանաչենք ու հասկանանք թէ՛ ինչ բնութեան տէր ենք ու ինչ ինչ յատկութիւններ ունինք: Շատ դիւրագրգիռ լինելուց՝ մեր շուտ տաքացող բարկացող ենք լինում, շուտ տրտմող, հեշտ ու բախաղող, հեշտ ու շուտ մարմնական ցանկութիւնների տարուող, մի խօսքով, մեր բնութիւնը խաղաղ, անվրդով, հաստատ, միակերպ չէ, այլ հեշտ ու շուտ այսպէս կամ այնպէս փոխուող. Այդպիսի բնութեան տէր մարդն այն եւ թ ունի, որ մի տեսակ թուլութիւն կայ վրան, որով յոյլ, սիրտ չափող ու շատ բանից վախեցող է լինում: Իմանալով, որ մեք կերպարանքով սիրուն ենք՝ սնապարծ ենք լինում. իմանալով, որ մեք մարմնով տկար ենք,

վախկոտ, խորամանկ ու չարասէր ենք լինում: Իսկ հրք որ գիտենք, որ մեր մէջ ոյժ, զօրութիւն կայ, հպարտ՝ հակառակող ու խիստ ենք լինում: Հազար ու մի տեսակ բնութեան տէր մարդիկ կան աշխարհումս, որ մին մինի չեն նմանում: Բայց իւր բնութեան առանձին յատկութիւններն պարզ ճանաչելու համար՝ միշտ առաջին եւ ամենահարկաւոր բանն՝ իւր գլխի տէրը լինելն է, ինքն իրան սանձել, զսպելն է:

Մեր ցանկութիւններին այնպէս ենք կան, որ «Լը-Ռի-նէ» են յառաջ գալիս: Արքեցոյը (խմուղ մարդը) առաջ սիրումէր գինին, բայց չափով էր խմում, որ ուրախութիւն անի, ուրախ ժամանակ անց կացնի: Բայց գինուն սորվելով եւ իրան դիւր գալովը՝ սովորութիւն արաւ սիրան ուղեցած ժամանակն խմել, այսպէսով ամէն օր եւս սիրան ուղումէր եւ պէտք էր խմէր, առանց գինու այլ եւս չէր կարող մնալ: Մի ժամանակին յետոյ հերիք չեկաւ այնքանը, որքանը որ սովորաբար խմումէր, ստիպուեցաւ չափը շատ աւելացնել:

Զինի ըն որ եւ իցէ բան թեւ «Լը-Ռի-նէ» անէս, շատ ըն՝ ինչ ժամանակէն թեւ, թանի որ անձնս բան է: Այժմ, վիսասկար ու վտանգաւոր բան է արդէն այն պատճառով, որ սովորութիւն անելուդ համար արտաքին աշխարհից կախումն ես ունենում, որ յառաջն չունէիր: Բայց ուր որ կախումն ունենալը կայ, այնտեղ ազատութիւնդ կորաւ: Ուր որ դու քեզ համար միս ու արիւն դարձած մի պէտքիդ հնազանդել ու կատարել ստիպուեցար եւ այն տեղը հասցրիր բանը, որ, ինչ ուղումէ լինի, այն քեզ պէտք բանը պիտի անես, չանել չես կարող, անհնարին բան է,—այլ եւս ի՞նչպէս պիտի կարողանաս այնուհետեւ քո գլխիդ տէրը լինել, ինքնդ քեզ զսպել, սանձել, Ոչ մի բան քեզ սովորութիւն մի անիլ ու՛ մեծ ցաւեր ամենեւին չես քաշիլ: Եթէ առաջ, կամ յետոյ մի բանի կարօտութիւն եւս զգալու լինիս: Այն աչքով մի մտիկ տար աշխարհիս որ եւ իցէ բանին վրայ, որ մտքումդ դնես թէ՛ միշտ քննդ կլինի, միշտ կունենաս, կամ ձեռքիցդ չգնալ: այլ այն աչքով նայիր աշխարհիս ամէն մի բանի վրայ, որ թէ քեզ եւ թէ ուրիշին մնալու չէ. եթէ այդ սրտով, այդ խելքով ապրես, ի՞նչ եւս որ կորցնես, այնչափ չես ցաւիլ, որ ինքնդ քեզ կ'ս' կորցրածիդ հետն կորցնես. ասածիս պէս որ պարելու

լինիս, երբէք քեզ այն տեղը չես հասցնիլ որ, քո սովորած բանդ ձեռք բերելու, ունենալու համար մի ծուռ բան անես:

Չեմ ասում թէ՛ քրիստոնեան ամեն վայելչութիւններէն՝ ամեն ուրախութիւններէն եւս իրան պէտք է զրկի: Մեր կեանքն լաւ անց կացնելու համար՝ մեզ տեսակ տեսակ ուրախութիւն բերող բաները պարգեւող մեր երկնաւոր Հայրն ամենեւին չէ կամենում, որ մեք տրտում տխուր ապրինք, միշտ թթուած երեսով լինինք, մեր սիրտը չբացուի. ընդ հակառակն նա կամենում է, որ մեք ուրախացողների հետն ուրախանանք: Աշխարհիս մէջ ինչ որ մեր սրտին գիւր է գալի, մեր կեանքն աւելի է քաղցրացնում ու մեք մեզ բազտաւոր ենք զգում, ուրախանալով: Բայց միշտ եւ ամեն տեղ մեք պիտի իմանանք մեր ցանկութիւններին չափ ու սահման դնելն, երբ որ մի աւելի բարձր պարտականութիւն կայ մեր առաջին՝ կոտորելու: Մեր մարմնաւոր ցանկութիւնները պէտք չէ մեր մէջը սպանենք, այլ չափաւորենք, զսպենք, սանձենք, որ, դէպ ի վատը փոխուելով, չմեծանան, չգործանան, կիրքեր կդառնան: Այլ որ, երբ ուզում է լինի, միշտ կարող է իւր ցանկութիւնները զսպել, որ իրան ճշմարտութեան ու առաքինութեան ճանապարհից մի մտադի չափ եւս դուրս հանել չկարողանան, այն մարդը յաղթութեան թագը ձեռք բերեց ու իւր գլուխը դրեց — այն ճաշդն էր գլխի Կէրն է:

Արտիճետեւ Աստուծոյ նման լինելը քո նպատակդ է, ո՛վ հոգեդէն մարդ, ուրեմն քո ամեն կարիքներդ (ինչ ինչ բանի եւս) որ կարօտութիւն, կամ ցանկութիւն ունիս) կարգով մին մին քննիր, եւ ամեն մի՛ քեզ հարկաւոր եղած՝ բանին համար ինքնդ քեզ հարցուր թէ՛ քո՞ կամքդ է, քո՞ ձեռքդ է այս կամ այն բանին կարօտութիւն կամ ցանկութիւն ունենալդ, թէ՞ այս, այն բանն է քո կամքիդ տէրն, քեզ անել է տալի ուղեցածն ու չես կարող չանել: Մի ինքնդ քո մէջդ ծանր ու թեթեւ արա՞ թէ՛ չէի՞ր կարող արդեօք ու դժուար կլինէր առանց նորան եւս կառավարուիլ. կարո՞ղ ես արդեօք ձեռք քաշել, մտքիցդ հանել, դէն ձգել ու սրտիդ ուրախութիւնն ու հանգստութիւնը դորս համար չկորցնել, միտք անելով թէ՛ վայ, ինչի՞ այդ բանին չբահանէի, ինչի՞ այն բանն չունենայի, ինչի՞ այն ցանկութիւնս չկատարէի. կարող էի, իմ ձեռքս էր, իմ կամքս էր. ինչի՞ ինքնս չկամեցայ, ինքնս ինձ կարօտ թողեցի, զրկեցի. ուրիշներից ի՞նչ

պակաս մարդ էի, որ ես եւս նոցա ունեցածները, վայելածները չունենայի, չվայելէի. եթէ բանն այդտեղ ես հասցնելու, աւելի լաւ է սրտիդ հանգստութիւնը, մտքիդ անդորրութիւնը չկորցնես. բայց սովորիր քո կամքովդ, որ եւ իցէ բանը չունենալով, կառավարուելու. լաւ իմացիր, որ ոչ մի բան միշտ քեզ մնալու չէ. քեզ համար ամենաթանկագին բանիցն անգամ քո սրտիդ ամենամօտ ու շատ սիրելի մարդիցն անգամ. այսօր է՛ թէ այգուց՝ մի ամսից՝ թէ քանի տարիներից յետոյ անպատճառ պիտի գրկուիս: Քրիստոսնեան ամեն մի ուրախութիւնը կարող է իրանն համարել, բայց չպիտի ասի թէ, առանց ուրախութեան կեանքս կեանք չլինիլ. եթէ տխուր օրեր պիտի անցկացնեմ, մեռնեմ լաւ է, քան թէ աղբիւմ: Քրիստոսնեան, եթէ հաստատ ու կենդանի հաւատ ունեցող, ճշմարիտ քրիստոսնեայ է, մի՛ եւ ոչ աւելի, բայց շատ մեծ, շատ բարձր կարօտութիւն, կարիք պէտք է ունենայ. այս այնպիսի կարիք է, առանց որոյ շունչ քաշել պիտի չցանկանար, այս ամենալսեմ՝ կարիքն՝ առաքինութիւն է, մարդիս գիտենալն է, որ Քրիստոսի մեզ աւանգած ուսմանն համեմատ ենք ապրում ու մեր միակ փափագն է Աստուծոյ նման լինելու:

Յիրաւի՛ կրօն առածդ մի սնտոի, մի ունայն բան կլինէր, առաքինութիւնն եւս մի դատարկ խօսք, եթէ որ մեր սրտից անց կացած ամեն մի ցանկութիւնն խօսոյն կատարուէր, եթէ որ առանց ջանքի եւ աշխատութեան կատարելութեան պտուղը քաղել կարողանայինք: Ինչպէս որ մեք մեր երեսի քրտինքովը պիտի ձեռք բերենք մեր օրական հացն, այնպէս եւս շատ ազնիւ աշխատութիւնը պէտք է մեր կողմանէ եւ անդադար հտեւից ընկնելը, միշտ կռուելով աշխարհի ու մեր անձի հետ, որ ձեռք բերենք այն անգին գանձը, որ աշխարհիս ամեն գանձերէն գերազանցն է. այս անգին գանձը մեր խղճմտանքի խաղաղութիւնն, հանգստութիւնն է, Աստուծոյ հետ հաշտ լինելն է, Նորանից սիրուելն ու Նորան ամենայն սրտով մեր սիրելին է, որ մեր գլխի տէրը լինելովը, ինքներս մեզ զսպելովն է գլուխ գալի՛:

Եթէ որ փոքր բան չես համարում ինքնդ քո գլխիդ տէրը լինելը, ոչ թէ ցանկութիւններիդ խաղալիքը լինելդ, որ քեզ տեսակ տեսակ վնասների, փորձանքների, վտանգների ու անբաղաւթիւնների մէջ ձգելուց ջոկ՝ ոչ մի շահ ու բաղաւորութիւն պիտի չբերին քեզ. եթէ սրտով ուղու մեծ քո գլխիդ, քո

խելքիդ, քո ճշմարիտ քրիստոնէական կամքի տէրը լինելդ, սկսիր այս տեղից. առաջ հեռացուր քեզանից այն ամեն բանն, ինչ որ քո մէջդ արդէն զօրացած ցանկութիւն է դարձել, ու քեզ կարող է անհանգիստ անել, քեզ գրգռելով: Հեռու պահիր քեզ այն ամեն բանից, ինչ որ քո սրտիդ մէջ ցանկութիւն է շարժում ու վառել ուզում, ինչ որ բարկութիւնդ է շարժում ու ինչ որ քո սնապարծութեանդ դիւր է գալի: Փախիր փորձութիւնիցդ՝ ու խելքդ գլխիդ կմնայ, ազատութիւնդ եւս կորուսած չես լինիր:

Զգոյշ պահիր քեզ երեւակայութիւններ անելուց՝ ու մի թողուր, որ իւր՝ ձեռնածուի (եալանչի փահլեվանի) խաղերը խաղայ քո մտքիդ մէջն, այն տեսակ իւր խաղերն, որ քո մէջդ թմրած գիժ ու միժ, կամ ծուռ մտքերդ ու վատ ցանկութիւններդ գարթեցնեն. երբ որ տեսնուես, որ այդ երեւակայութիւնդ քեզ գլխիցդ ու ճամբիցդ ուզում է հանի — մտքիցդ քշիր, հեռացուր, որ քեզ չկարողանայ կախարդել ու որոգայթի մէջ ձգել. ուրիշ բաների վրայ մտածիր, որտեղ որ ես, այնտեղից դուրս ե՛կ, ուրիշ տեղ գնա՛. եթէ մարդիկ են, քանի հոգի միասին հաւաքուած, նոցանից հեռացիր. մի օգտակար վրան մտածելու մի պարապմունքի կպիր, միտքդ բեր Աստուածդ, միտքդ բեր յաւիտենական կեանքը, միտքդ բեր մահուանդ օրը, ժամն ու րոպէն, քո ծնողքդ, արեւակիցքդ, միտքդ բեր քո սրտիդ սիրեկաններդ, որ այն կեանքումն քեզ են սպասում: Միտքդ բերելու իսկ ժամանակն է նոյնպէս այն, ինչ որ երբէք մտքից պիտի չձգես մոռանաս. թէ դու Աստուծոյ զաւակը լինելու բարձր արժանաւորութիւնը պէտք է ունենաս, որ նորա սիրելի զաւակը լինիս, ինչպէս որ իսկ կոչումնդ է:

Սուրբ սրտով աչքդ դէպ ի երկինքը ձգելով, ամեն օր դուրս ե՛կ գործիդ, որ քո կեանքիդ մէջը կատարուես, ամեն երեկոյ եւս աշխարհքից յետ քաշուիր, միայնացիր քո ննջարանումդ, Զլինի թէ մի մարդ երբ եւ իցէ իմանայ քո թոյլ կողմդ, որով կարելի է քեզ հեշտ յաղթել. եթէ որ յայտնուեցաւ թոյլ կողմդ, իմացիր, որ չար մարդոց խաղալիքը դարձար. հետդ պէտք է ընկնեն, երբ որ սիրտներն ուզի՝ ու վրայ ծիծաղեն: Զլինի որ երբ եւ իցէ քո վատ ցանկութիւններիդ ձեռքն ընկնես ու բռնուես, քո գլխիդ տէրը քո մէջդ միայն դու լինի՛ս. ո՛չ

մի կիրք ոչ մի չար ցանկութիւն չկարողանայ բարձրանալ ու քո բանականութեանդ թագաւորական աթոռը նստիլ: Ով որ ամենայն հանգամանաց մէջ միշտ ինքն իրանն է, ինքն իրանից չէ օտարացել, աշխարհքն եւս նորանն է, նա ունեւոր է, ինչու որ ոչ մի մարդ չէ կարող նորանից մի բան խելի, որ առանց նորան եւս ինքն չկառավարուի. նա զօրաւոր մարդ է, ինչու որ ոչ մի մարդից կախումն չունի. պատճառ որ այնպիսի մի վատ գործ միտքը չէ գալի, որ ինքն արած լինի ու իւր այն գործիցը վախենայ. նա ազատ է, համարձակ, ճակատը բաց, ինչու որ իւր բարձր հոգին գերի չէ որ եւ հցէ սովորութիւնի, որ արած լինի ու յետ կենալ չկարողանայ. նորա համար անհրաժեշտ պէտք, կարիք ասած բանը չկայ, ինչպէս որ շատ մարդիկ շատ տեսակ պէտքեր, կարիքներ ունին, առանց որոց ապրելը իւրեանց համար մեծ ու անտանելի զրկանք կհամարին. նա մի բան որ ասումէ, մի բան որ անումէ, այս՝ այն մտքով, այս՝ այն նպատակը ունենալուն համար չէ անում. նա այս աշխարհի վրայ ապրած ժամանակն արդէն երջանիկ է, ինչու որ երկինքն իւր սրտի, իւր հոգւոյ մէջն է:

Ախ, մինչեւ հիմա ես որտեղ էի, ի՞նչ բանի վրայ էի. ինչո՞ւ համար երջանիկ չէի, որ պիտի լինէի եւ կարող էի լինել Աստուծոյ օգնութիւնովն: Ինչո՞ւ երջանիկ չեղայ թէեւ ասումեմ, բայց մեղքն իմն է, պակասութիւնն ինձանումն է այն պատճառով, որ ես դեռ եւս իմ գլխի տէրը լինել չէի՝ կարողանում, դեռ եւս շատ էր պատահում ինձ, որ իմ բուռն կիրքերիցս յաղթվում էի ու նոցա ձեռքը գերի լինում. ոչ թէ ես էի կառավարում իմ ցանկութիւններս, կարգի՝ կանոնի տակ պահելով, այլ ընդ հակառակն իմ ցանկութիւններս էին ինձ կառավարում, իւրեանց կամեցած կանոնովն ինձ զգալ, մտածել, խօսել, գործել տալով ու ինձ վրայ իշխանութիւն բանեցնելով, ու վայ ինձ. քանի քանի անգամ են ինձ դառն արտասուք թափել տուել, քանի քանի անգամ սաստիկ փոշիմանելուս պատճառն եղել, որ իւրեանց ուզեցածովն արել եմ, ինչ որ արել եմ:

Ամենագէտ իմ երկնաւոր Հայր, քեզ ամէն բան յայտնի է. լաւ յայտնի է նոյնպէս, որ ես տկար արարած եմ, Ես չաշխատեցի՝ այո՞ որ աւելի կատարեալ լինիմ. ես ուրիշների օրինակին հետեւելով, նոցա նմանեցի, նոցանցից յետ չմնացի ու շատ ան-

գամ խարուեցայ, շատ անգամ սխալուեցայ, մեղանչեցի: Ես իմ զգայական ցանկութիւններէս քաջութիւնով ընդդէմ կանգնելու տեղն, սրտովս թուլացայ ու նոքա մրրիկի նման իմ ճանապարհս կորցնել տուին ինձ, մոլորեցրին, ես յաղթուեցայ որովհետեւ խելքս գլուխս հաւաքել ու ինձ պահել չկարողացայ, տարուեցայ, տարին ինձ, ուր որ տանել ուզեցան. իմանումէի, հասկանումէի, որ սխալվումեմ, ճանապարհիցս դուրս եմ եկել՝ բայց՝ խելքը կորցրած մարդի պէս՝ գիժագիժ յետ չէի կենում այն բանն անելուց, ինչ որ պէտք չէր անէի: Ի՞նչ օգուտ ունեցաւ յետոյ ինքնս ինձ հետ կռուելու, ինքնս ինձ վատ ասելու. կամ ի՞նչ շահ ունեցաւ արածներէցս փոշիմանելու, երբ որ ճանապարհս փոխեցի, ինքնս չփոխուեցայ, չուղղուեցայ, չլաւացայ:

Ինքս իմ գլխիս տէրը լինելու, ինձ զսպինն ոչ թէ սրտիս, այլ իմ խելքիս լսելն — այսուհետեւ իմ հաստատ գիտաւորութիւնս ու նպատակս լինի՝ Առանց այս մեծ առաքինութեան՝ ուրիշ առաքինութիւն չկայ, որ մարդս կարողանայ ունենալ ու, առանց այդ առաքինութեան ինքնագլուխ չենք կարող լինել իբրեւ յիրաւի բանական մարդիկ, որոց մէջ միշտ խելքն է իշխանութիւն բանեցնողն ու ամեն բանի մէջ ուղիղ ու լաւ ճանապարհն ցոյց տուողը, ուրեմն առանց այդ առաքինութեան երջանիկ եւս լինել չենք կարող: Ես ինձ ազատ պիտի պահեմ Քրիստոս Փրկչիս իմ աւանդած ուսումովն, ես ինձ ազատ պիտի պահեմ ամենայն աշխարհային բանի ինձ վրայ ոյժ բանեցնելուց, պատճառ որ ես անմահական կեանք ժառանգելու եմ կոչուած իմ Ստեղծողիցս, ես՝ անցաւոր, հող դառնալու, բանինը չպիտի լինիմ, այլ իմ Աստուծոյս պէտք է պատկանեմ ու նորանը պիտի լինիմ բոլորովի՛ն:

(Թ—Գ.)

Գ. Ե. Ա.